ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«4» հուլիսի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

_____ Ս. Անանյան

ԳԲԽ-69/16 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Անանո» ՍՊԸ-ի 16.06.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Անանո» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Անանո» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 16.06.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ 02.04.2016թ. դիմում են ներկայացրել Երևանի քաղաքապետրան՝ պարոն Չթրյանի անվամբ, որում մասնավորապես նշել են՝ «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կայացրած որոշման համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Անանո» ՍՊ ընկերությունը:

Սակայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի համաձայն՝ պատվիրատուն մինչ օրս (02.04.2016թ.) ընտրված մասնակցին («Անանո» ՍՊ ընկերությանը) չի ծանուցել, չի ներկայացրել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ «Անանո» ՍՊԸ-ն խնդրել է հայտնել պատճառները, իսկ դրանց առկայության դեպքում խնդրել են տրամադրել համապատասխան փաստաթղթերը:

Ի պատասխան իրենց գրության՝ Երևանի քաղաքապետարանը 11.04.2016թ. թիվ 61/567 գրությամբ տրամադրել է այն հիմքերը, որոնց պատճառով «Անանո» ՍՊ ընկերության հետ չի կնքվել Պայմանագիր, դրանք են՝ թիվ ԵԱՔԴ/0371/02/16 քաղաքացիական գործով կայացված արգելանքի կիրառման մասին որոշումը, կատարողական թերթը և այլն:

Սակայն հետագայում՝ 13.05.2016թ., դատարանի որոշմամբ դրված արգելանքը «Անանո» ՍՊ ընկերության մասով վերացվել է:

Ընկերության կողմից, հաշվի առնելով, որ այլևս վերացել են պայմանագիր կնքելու խոչընդոտները, կրկին դիմում է ներկայացվել քաղաքապետարան՝ պայմանագիր կնքելու խնդրանքով:

Սակայն 27.05.2016թ., ի պատասխան իրենց գրության, պարոն Չթրյանը հայտնել է, որ պայմանագիր հնարավոր կլինի կնքել միայն բոլոր մասնակիցների հետ միաժամանակ, և քանի որ «ՍՈՍ-97» ՍՊ ընկերության վրա դեռ առկա է արգելանք, ուստի գնահատում հնարավոր չի իրականացնել:

Ըստ Ընկերության՝ վերոնշյալը չի բխում օրենքից, ավելին՝ ոչ մի իրավական կամ նորմատիվ ակտից: Նշվածի հիմնավորումը ելնում է հենց պարոն Չթրյանի գրությունից, որում ոչ մի իրավական հիմք իր գրությունը հիմնավորող նշված չէ:

Այն, որ թիվ «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/1» ծածկագրով ընթացակարգի պայմանագիրը չէր կարող կնքվել արգելանքի առկայության դեպքում, դա հասկանալի է, բայց օրենսդրական ոչ մի նորմից և նորմատիվ իրավական ակտից չի բխում պատվիրատուի գործողությունները, ավելի ճիշտ անգործությունը՝ պայմանագիր չկնքելը արգելանքը վերացվելուց հետո:

Ավելին՝ բողոքի առարկա հանդիսացող թիվ «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/98» ծածկագրով ընթացակարգ հայտարարելու պատճառը հենց հանդիսացել է նախորդ ընթացակարգի

շրջականներում պայմանագիր կնքելու արգելքը, սակայն եթե արգելանքը վերացվել է, ապա ինքնբերաբար պետք է կնքվի պայմանագիր:

Տվյալ դեպքում, եթե կնքվում է պայմանագիր թիվ «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/98» ծածկագրով ընթացակարգի հիման վրա, ապա ստացվում է, որ թիվ «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/1» ծածկագրով ընթացակարգի պայմանագիրը միակողմանիորեն՝ պատվիրատուի կողմից լուծվում է:

Ուստի ստացվում է, որ 07.06.2016թ. գնահատող հանձնաժողովի կայացրած թիվ 10 որոշումը՝ թիվ «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/98» ծածկագրով ընթացակարգի հիման վրա պայմանագիր կնքելու մասին, անհիմն է, անօրինական:

ՀՀ կառավարության գնումների գործընթացի կազմակերպման մասին 10 փետրվարի 2011 թվականի N 168-Ն որոշման 36-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ պատվիրատուի ստացածով:

Նույն կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը

կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը: Ընդ որում, արգելվում է միևնույն բյուջետային տարվա ընթացքում նույն ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման նպատակով նախատեսել ֆինանսական միջոցներ:

Վերոնշյալ հոդվածների վերլուծությունից հստակ է, որ ՀՀ Կառավարությունը սահմանել է հստակ դեպքեր, թե երբ կարող է պայմանագիր չկնքվել: Ընդ որում սահմանված են միայն իմպերատիվ դրույթներ, այսինքն դրանք անքակտելի են՝ անփոփոխ:

Ուստի 27.05.2016թ. թիվ 61/31915h գրությամբ նշված պատվիրատուի պատճառաբանությունը, Ընկերության կարծիքով, չի կարող բխել օրենքից՝ անհիմն է:

Տվյալ դեպքում, եթե կնքվում է պայմանագիր թիվ «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/98» ծածկագրով ընթացակարգի հիման վրա, ապա ստացվում է, որ թիվ «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/1» ծածկագրով ընթացակարգի պայմանագիրը միակողմանիորեն՝ պատվիրատուի կողմից լուծվում է, դրանով իսկ խախտելով ՀՀ կառավարության վերոնշյալ որոշման դրույթները:

Ուստի ստացվում է, որ 07.06.2016թ. գնահատող հանձնաժողովի կայացրած թիվ 10 որոշումը՝ թիվ «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/98» ծածկագրով ընթացակարգի հիման վրա պայմանագիր կնքելու մասին անհիմն է, անօրինական:

Ավելին՝ եթե այլ ասպեկտից ենք նայում հարցին, ապա առաջանում է հետևյալ իրավական խնդիրը կամ իրավական նորմերի բախում.

Այսպես՝

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 521-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Մատակարարման պայմանագրով ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող մատակարար-վաճառողը պարտավորվում է իր արտադրած կամ գնած ապրանքները պայմանավորված ժամկետում (ժամկետներում) հանձնել գնորդին՝ **ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու կամ անձնական, ընտանեկան, տնային կամ այլ նմանօրինակ օգտագործման հետ չկապված նպատակներով օգտագործելու համար:**

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ Սույն օրենքը կարգավորում է պատվիրատուների կողմից ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման գործընթացի հետ կապված հարաբերությունները, սահմանում այդ հարաբերությունների կողմերի հիմնական իրավունքները և պարտականությունները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի համաձայն՝ Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝ պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ **կարիքին համապատասխան ապրանքների**, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ:

Վերոնշյալ հոդվածներից պարզ է, որ **ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու կամ անձնական, ընտանեկան, տնային կամ այլ նմանօրինակ օգտագործման հետ չկապված նպատակներով որոշակի ապրանքներ օգտագործելու համար** հայտարարվում է մատակարարման մրցույց:

Այլ կերպ ասած, մատակարարման մրցույթը հայտարարվում է եթե կարիք կա ապրանքներ մատակարարելու համար:

Տվյալ դեպքում հայտարարվել է երկու մրցույթ՝ թիվ «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/1» ծածկագրով և ապա թիվ «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/98» ծածկագրով՝ հաշվի առնելով թիվ «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/1» ծածկագրով պայմանագիր կնքելու արգելքը: Ստացվում է, որ պատվիրատուի կողմից մինչև արգելանքը վերացնելը կատարվել է բոլոր անհրաժեշտ միջոցները, որոնք ուղղված են եղել իր կարիքների բավարարմանը՝ հայտարարելով նոր մրցույթ(«ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/98»): Բայց արգելանքներն արդեն՝ 13.05.2016թ. վերացվել են ու այլևս թիվ «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/98» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում պայմանագիր կնքելու անհրաժեշտությունն էլ վերացել է:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է.

1. Որպես միջանկյալ ընթացակարգ՝ կիրառել ժամանակավոր միջոցներ, որոնք ուղղված են ներկայացված խախտման վերացմանը կամ առնչվող շահերին հասցվելիք հետագա վնասների կանխմանը:

2. 07.06.2016թ. գնահատող հանձնաժողովի թիվ 10 որոշման իրականացումը կասեցնել:

3. 07.06.2016թ. գնահատող հանձնաժողովի թիվ 10 որոշումը դադարեցնել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 23.06.2016թ. ժամը 17:30-ին ԳԲԽ-69/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ «Անանո» ՍՊԸ-ի ներկայացուցիչը պնդել է բողոքով ներկայացրած դիրքորոշումը և հայտնել է, որ «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/98» ծածկագրով ընթացակարգը կազմակերպվել է որպեսզի բավարարվեն «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/1» ծածկագրով կասեցված ընթացակարգի կարիքները և «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/98» ծածկագրով ընթացակարգն իրականացվելուց հետո «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/1» ծածկագրով ընթացակարգը կդառնա առարկայազուրկ, ինչով և վնաս կհասցվի «Անանո» ՍՊԸ-ի օրինական շահերին:

2. Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

Երևանի քաղաքապետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 30.06.2016թ. թիվ 02/61-38032 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ բողոքով նշված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/1» և «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/98» ծածկագրերով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգերը որևէ առնչություն չունեն իրար հետ:

«ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգով պայմանագրեր կնքելու վերաբերյալ դատարանի արգելանքը վերացվել է մասնակի, սակայն www.armeps.am համակարգի միջոցով հնարավոր չէ մրցույթը մասնակիորեն ամփոփել, ուստի հետագայում արգելանքն ամբողջությամբ հանվելու դեպքում Երևանի քաղաքապետարանը կկնքի վերոհիշյալ ծածկագրով ընթացակարգի պայմանագրերը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 23.06.2016թ. ժամը 17:30-ին ԳԲԽ-69/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչներն առարկել են բողոքի դեմ և հայտնել են, որ «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/98» և «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/1» ծածկագրերով ընթացակարգերը նույնական չեն, այլ ընթացակարգեր են, և «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/98» ծածկագրով ընթացակարգը հայտարարվել է, որպեսզի պատվիրատուի կարիքների համար ձեռքբերվեն այլ ապրանքներ, իսկ ընթացակարգի անցկացման էլեկտրոնային եղանակը թույլ չի տալիս որպեսզի ընթացակարգը շարունակեն և ամփոփեն:

3. ԳԲԽ-69/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-69/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով 06.10.2015թ. կազմակերպվել է «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 16.10.2015թ. հայտ է ներկայացրել «Անանո» ՍՊԸ-ն՝ 2, 4-7, 20, 23, 29, 35-37, 40, 42-45, 49, 54, 58, 63-67 և 69 չափաբաժինների մասով:

2. «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2015թ. դեկտեմբերի 24-ի որոշմամբ «Անանո» ՍՊԸ-ն 4-7, 23, 29, 35-37, 40, 42-45, 49, 54, 58, 63, 64, 66, 67 և 69 չափաբաժինների մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

3. Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետև նաև՝ Դատարան) 08.02.2016թ. որոշմամբ բավարարվել է հայցի ապահովման միջոցներ ձեռնարկելու մասին միջնորդությունը և Պատվիրատուին արգելվել է «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/5» և «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/1» ծածկագրերով ընթացակարգերի շրջանակներում պայմանագրերի կնքումը:

4. Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 13.05.2016թ. որոշմամբ բավարարվել է հայցի ապահովման միջոցները վերացնելու մասին միջնորդությունը և մասնակիորեն վերացվել է Դատարանի 08.02.2016թ. որոշմամբ ձեռնարկված հայցի ապահովման միջոցները՝ արգելվել է Պատվիրատուին «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/5» և «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/1» ծածկագրերով ընթացակարգերի շրջանակներում միայն «Սոս-97» ՍՊԸ-ի հետ պայմանագրերի կնքումը, իսկ ընթացակարգերի շրջանակներում մնացած բոլոր կազմակերպությունների և ընկերությունների հետ պայմանագրեր կնքելն արգելելու մասով կիրառված հայցի ապահովման միջոցները վերացվել է:

5. Երևանի քաղաքապետարանի 27.05.2016թ. թիվ 61/31915 գրության համաձայն՝ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 13.05.2016թ. որոշմամբ Երևանի քաղաքապետարանին

արգելվել է «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/1» և «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/5» ծածկագրերով ընթացակարգերի շրջանակներում միայն «Սոս-97» ՍՊԸ-ի հետ պայմանագրերի կնքումը, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնման ընթացակարգերը իրականացվում են էլեկտրոնային ձևով և գնման ընթացակարգերի ամփոփումը (գնահատումը) պետք է իրականացվի մրցույթներում ներկայացված բոլոր չափաբաժինների համար հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների մասով միաժամանակ, ուստի գնման ընթացակարգերի գնահատումը հնարավոր չի իրականացնել առանց «Սոս-97» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ամփոփման:

6. Երևանի քաղաքապետարանի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով 26.04.2016թ. կազմակերպվել է «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/98» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 05.05.2016թ. հայտ է ներկայացրել «Անանո» ՍՊԸ-ն՝ 1, 2, 4-7, 9, 16, 18, 19, 22, 25-27, 30-37, 40, 41, 43, 45, 50-56 չափաբաժինների մասով:

7. «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/98» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016թ. մայիսի 31-ի որոշմամբ «Անանո» ՍՊԸ-ն 4-7, 16, 19, 22, 26, 27, 30, 31, 34, 36, 40, 45, 52 և 54 չափաբաժինների մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

8. Երևանի քաղաքապետարանի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/98» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետև նաև՝ Գնահատող հանձնաժողով) 07.06.2016թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 10 արձանագրության համաձայն՝ «Ֆոտոն» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից և որոշվել է ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հրավիրել նիստ՝ պայմանագիր կնքելու համար:

<u>4. ԳԲԽ-69/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Անանո» ՍՊԸ-ի 16.06.2016թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, Երևանի քաղաքապետարանի գրավոր դիրքորոշումը և

ներկայացված փաստաթղթերը, Երևանի քաղաքապետարանի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/98» և «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/1» ծածկագրերով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգերի հրավերները, Երևանի քաղաքապետարանի 2016թ. գնումների պլանը, գտնում է, որ «Անանո» ՍՊԸ-ի 16.06.2016թ. ներկայացրած բողոքը ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/98» և «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/1» ծածկագրերով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգերի հրավերների ուսումնասիրությունից երևում է, որ «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/98» և «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/1» ծածկագրերով ընթացակարգերը նույնական չեն, դրանք ունեն տարբեր գնման առարկաներ՝ տարբեր չափաբաժիններով, իսկ Երևանի քաղաքապետարանի կողմից www.gnumner.am համացանցային կայքում 28.04.2016թ. հրապարակված «Երևանի ենթակայության կազմակերպությունների կենտրոնացված կարգով գնումների 2016թ. պլան»-ի ուսումնասիրությունից երևում է, որ վերը նշված երկու ընթացակարգերի գնման առարկաներն էլ նախատեսված են գնումների պլանում:

Կենտրոնը գտնում է, որ անհիմն է բողոք բերած ընկերության այն պնդումը, որ վերոհիշյալ ընթացակարգերը նույնն են, և որ «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/98» ծածկագրով կազմակերպված ընթացակարգի շրջանակներում պայմանագրեր կնքվելու դեպքում «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/1» ծածկագրով կասեցված ընթացակարգի շրջանակներում չեն կարող կնքվել պայմանագրեր:

Ելնելով վերոգրյալից՝ Կենտրոնը գտնում է, որ «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/98» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումը դադարեցնելու որևէ իրավական հիմք առկա չէ:

Ինչ վերաբերում է բողոքի այն պատճառաբանություններին, որ «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում պայմանագիր կնքելու արգելքը արգելանքը վերացել է և պետք է կնքվի պայմանագիր, ապա Կենտրոնն արձանագրում է, որ «Անանո» ՍՊԸ-ի 16.06.2016թ. ներկայացված բողոքը, ինչպես նաև բողոքով ներկայացված պահանջը վերաբերում է «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/1» ծածկագրով ընթացակարգին, ուստի դրանք բողոքի առարկայից դուրս են:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է, որ Երևանի քաղաքապետարանի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/98» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 07.06.2016թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 10 արձանագրությամբ «Ֆոտոն» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումը դադարեցնելու պահանջի վերաբերյալ «Անանո» ՍՊԸ-ի կողմից Կենտրոնին 16.06.2016թ. ներկայացված բողոքն անհիմն է և առաջարկում ենք այն մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ՝ Հ.Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ Մ.Կատվալյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-69/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Դավթյան